

Պատասխաններ
հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի

11-րդ դասարան

2. **ոչ մեկ** - ոչ մեկը, հաղթել **իրեն** – հաղթել նրան, տիրապետելով նետ արձակելու **արվեստը**- արվեստին, **դառավ** -դարձավ, որոշեց **վերացնելու**- որոշեց վերացնել, **սկսվեցին** նետերի տեղատարափը- սկսվեց նետերի տեղատարափը նետերն **ավարտվում են** - նետերը սպառվում// պրծնում են, **ընձեռնված** հաջողությունից-ընձեռնված **սառում է**- սառչում է, **ինչի քեզ** չեմ սովորեցրել- ինչու քեզ չեմ սովորեցրել

3. Նետաձգություն սովորելու համար մի պատանի դիմեց իրենց երկրի՝ տարիներով անպարտելի հոչակված ուսուցչին. բազմահմուտ մրցակիցներից ոչ մեկ դեռևս չէր կարողացել հաղթել իրեն:

Կարճ ժամանակում տիրապետելով նետ արձակելու արվեստը՝ երիտասարդը դառավ երկրի լավագույն նետաձիգներից մեկը: Մի օր, սակայն, նախանձը՝ մարդուն բնորոշ այդ չարիքը, բույն դրեց նրա հոգում: Ու պատանին որոշեց վերացնելու ուսուցչին իր ճանապարհից՝ փառքի հասնելու մոլուցքով տարված, և ձեռնոց նետեց նրան:

Հաջորդ օրը՝ արևածագին, կանգնեցին նրանք դեմ դիմաց՝ հարյուր քայլ հեռավորության վրա, ու սկսվեցին նետերի տեղատարափը: Հավաքված ամբոխը, որ համոզված էր՝ հաղթելու է մեծանուն վարպետը, շունչը պահած դիտում էր մարտը:

Սակայն ուսուցչի նետերն ավարտվում են, ու նա վայր է դնում աղեղը: Ոգևորված իրեն ընձեռնված հաջողությունից՝ տղան, վայրկյան անգամ չհապաղելով, շեշտակի արձակում է նետը, և ուսուցիչը տապալվում է գետնին: Ամբոխը խոր հառաչում է, երիտասարդը՝ չարախնդորեն հրճվում: Բայց հրճվանքը երկար չի տևում, ժպիտը սառում է դեմքին, երբ տեսնում է ուսուցչին՝ նետն ատամներով բռնած:

Մոտենալով իր ապերախտ սանին՝ վարպետն ասում է.

– Հիմա հասկացար՝ ինչի քեզ չեմ սովորեցրել ատամներով նետ որսալու հնարքը:

4. **Հոգնակիները**՝ ճառագիրներ, կոնքագդրեր, քթանցքեր, փողկապներ, տարեղարձեր, սպունգներ, ապրանքանիշներ, ստինքներ, երկնաքերներ, շերամորդեր:

5. **նկանակ**- կլոր(փոքր) հաց **երախայրիք**- առաջին պտուղ՝ բերք ստեղծագործություն, **նավախել**-նավի հետևի մասը, **բամբիռ**-եռալար երաժշտական գործիք **համբակ**-թերուս, տգետ, իմաստակ, **տատամսել**-երկյուղել,վարանել,շվարել **մարմաջ**- բուռն ցանկություն, **կորով**- ուժ, եռանդ/ ձիրք,կարողություն **մախաղ**- ուսապարկ, ուղեպարկ, **լողակ**-լողաթև

6. **բազեի թևերով զարդարված սագ**-իրեն մեծարող, հոխորտացող անձնավորություն, **ծանր է Հիպոկրատի գլխարկը**- յուրաքանչյուր պարտականություն մեծ բեռ է և պատասխանատվություն

2023

**Գնահատման չափանիշներ
հայոց լեզվի մարզային օլիմպիադայի հարցաշարերի**

11-րդ դասարան

1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
(կա թվով 30 կետադրական նշան)
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: